ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Ք. Երևան, 5 հոկտեմբերի 2020 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) հերթական նիստի

Մասնակցում էին՝

Տ. Խաչատրյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)
Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)
Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Ռ. Գրիգորյան – ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)
Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)
Բ. Պիպոյան - <<Իրազեկ և պաշտպանված սպառող>> ՀԿ նախագահ (Խորհրդի անդամ)
Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (Խորհրդի անդամ)
Մ. Սանդոյան - <<ՓՄՁ համագործակցության ասոցիացիա>> ՀԿ կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)

Հրավիրված էին՝

Ն. Հայրապետյան – ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ, ղեկավարի պարտականությունները կատարող
Գ. Սարոյան – ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ
Մ. Երիցյան – ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ
Է. Բասենցյան - ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ

Ողջունելով ներկաներին՝ Խորհրդի նախագահ Տ. Խաչատրյանը առաջարկեց հնարավորինս արագ աշխատել՝ հասկանալով, որ օրակարգը պարտադրված է՝ հարցերի հրատապությամբ պայմանավորված:

Ա. Ասոյանն առաջարկեց քննարկել տեսչական մարմնի ղեկավարի թեկնածուների քվեարկության հարցը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելու նպատակով: Իսկ օրակարգի մյուս հարցերին եթե

ծանոթացել են, կարող են քվեարկել, հակառակ պարագայում առաջարկեց ներկայացնել գրավոր համաձայնեցման եղանակով, էլեկտրոնային քվեարկության:

1. Խորհրդի՝ օրակարգի մասին քվեարկությանը մասնակցած անդամների 10(տասը) կողմ ձայներով որոշվեց.

1) «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու վերաբերյալ հարցը դնել էլեկտրոնային քվեարկության:
2) «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ուղեցույցը» հաստատելու մասին հարցը դնել էլեկտրոնային քվեարկության:

2. Վարչապետին ներկայացնելու նպատակով Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակելու համար թեկնածությանը հավանություն տալու վերաբերյալ

(Ա. Ասոյան, Ռ. Գրիգորյան, Բ. Պիպոյան, Մ. Սանդոյան, Տ. Խաչատրյան)

Խորհրդի նախագահը հիշեցրեց, որ քննարկվում է գրավոր ներկայացված երկու թեկնածություն, ընդ որում, Գ. Ավետիսյանի թեկնածությունը ներկայացվել է իր կողմից:

Ա. Ասոյանը պարզաբանեց կարգը, ըստ որի հրավիրվում է թեկնածուն, արտահայտում է իր մոտեցումներն ու պատկերացումները, պատասխանում իրեն ուղղված հարցերին, որից հետո դուրս է հրավիրվում, այնուհետև լսում են մյուս թեկնածուին, դուրս հրավիրում, քննարկում են ու վերջնական քվեարկում:

Բ. Պիպոյանը հիշեցրեց, որ ՍԱՏՄ կառավարման խորհրդի նիստերից մեկի ժամանակ ինքը հարց է բարձրացրել, թե նպատակահարմար կլինի սպասել, աշխատակարգը հաստատել, որից հետո մյուս հարցերը դնել քննարկման, սակայն բոլորին հասկանալի է, որ գործընթացներն ավելի շատ ընթացակարգային են,

առաջարկեց հաշվի առնել, որ սիմվոլիկան ավելի շատ է, քան բովանդակային մասը, ավելի քիչ ժամանակ հատկացնել, հարցեր տալ թեկնածուներին, ստանալ պատասխաններ և հնարավորինս արագ ավարտել քվեարկությունը՝ հաշվի առնելով օրվա կարևոր անելիքները:

Նախարարը պարզաբանեց, որ թեկնածուների կողմից իրենց գործունեության կամ տեսլականի ներկայացման համար ավելի կարճ ժամանակ կհատկացվի, իսկ հարց ու պատասխանի համար՝ համեմատաբար ավելի երկար:

Ա. Ասոյանն առաջարկեց միանգամից թեկնածուին հարցեր ուղղել, քանի որ նախապես ներկայացված են եղել ինքնակենսագրականները:

2.1 Վարչապետին ներկայացնելու նպատակով Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում Գեորգի Ավետիսյանին նշանակելու համար թեկնածությանը հավանություն տալու վերաբերյալ

(Տ. Խաչատրյան, Ա. Ասոյան, Բ. Պիպոյան, Մ. Սանդոյան)

Նախարարը հրավիրեց իր կողմից ներկայացված ՍԱՏՄ ղեկավարի թեկնածու Գ. Ավետիսյանին: Թեկնածուին ներկայացվեց ընթացակարգը, որով պայմանավորվել են անցկացնել քննարկումը և քվեարկությունը՝ հաշվի առնելով օրվա առանձնահատկությունները, իսկ զարգացման հարցերի շուրջ թեկնածուի տեսակետները հայտնելու ժամանակը կտրամադրվի Խորհրդի կողմից տրվող հարցերին և թեկնածուի պատասխաններին:

Ընթացակարգի վերաբերյալնախարարը մի դիտարկում արեց, որ ենթադրում է հաշվի առնելով Գ. Ավետիսյանի կատարած աշխատանքը, նաև հետագա գործունեության ընթացքում պետք է այդ հարցերին անդրադառնալ, և քանի որ ինչպես նշեց Բ. Պիպոյանը, Խորհրդի աշխատանքները կանոնակարգված չեն, երբեմն սեղանի շուրջ է հնարավոր լինում որոշում կայացնել, հույս հայտնեց, որ հետագայում նման հարցերը կկանոնակարգվեն, որպեսզի օպերատիվ կամ աշխատանքային ձևաչափով հնարավորինս քիչ հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու կարիք լինի:

Նախարարը խնդրեց հակիրճ ներկայացնել տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում զբաղեցրած ժամանակահատվածում իր կողմից կատարված աշխատանքները:

Գ. Ավետիսյանը հակիրճ ձևակերպումով ներկայացրեց, որ դա կլինի յուրաքանչյուրի կարծիքը՝ իր պաշտոնավարման երկու տարիների ընթացքում կատարած աշխատանքի վերաբերյալ: Իսկ հետագայի համար իր մոտեցումը, իր քաղաքականությունը մնացել է անփոփոխ՝ օգնել տնտեսվարողին, որ չթունավորի սպառողին: Նա նշեց, որ շատ հարցեր ՍԱՏՄ գործառույթների մեջ չեն մտնում, սակայն ամեն դեպքում ամեն ինչ արվում է, որպեսզի տնտեսվարողները, ովքեր ոլորտում գործունեություն են իրականացնում, ավելի շատ իրազեկված լինեն, նշեց, որ կարևորում է հանրային հատվածի հետ աշխատանքը, և ինչպես բազմիցս նշել է, հանրային հատվածը տեսչական մարմնի համար հանդիսանում է ևս մեկ գործիք՝ պետական վերահսկողություն իրականացնելու համար: Այս երկու հիմնական գործիքներն են, որ տեսչական մարմինը կիրառել է և շարունակում է կիրառել՝ ոլորտում ձեռքբերումներ ունենալու և վերահսկողությունը ավելի հեշտ դարձնելու համար:

Բ. Պիպոյանի հարցը այն էր, թե արդյոք թեկնածուն ուզում է օրենքով աշխատել, թե ստիպված է օրենքով աշխատում:

Գ. Ավետիսյանի կարծիքով հարցը զարմանալի էր, քանի որ ինքն անկասկած ուզում է օրենքով աշխատել, ավելին՝ դրան այլընտրանք չի տեսնում: Միաժամանակ հավելեց, որ այժմ կան օրենսդրական կարգավորումներ, որոնք երբեմն խանգարում են:

Մ. Սանդոյանի հարցին, թե որն է համարում ամենանշանակալի ձեռքբերումը իր պաշտոնավարման երկու տարիների ընթացքում, Գ. Ավետիսյանը նշեց, որ դրանք են Իրանի տարածքով անցնող տրանզիտը, որը ստանալու համար բավականին մեծ ջանքեր են ներդրվել և ձկնաբուծության ոլորտում վտանգավոր նյութերի մասով հասել են լուրջ նվազեցման՝ ունենալով ոգևորիչ տվյալներ: Մ. Սանդոյանի հարցին, թե ինչ անելիքներ ունի հետագայում, Գ. Ավետիսյանը նշեց, որ դրանք շատ են, իսկ առաջնահերթ պետք է կարգավորել տեղական շուկան, մոնիթորինգների արդյունքում հասկանալ, թե ինչ պատկեր է տեղական արտադրության մեջ, օգնել գյուղացիներին, որ տեղական արտադրանքը լինի ավելի անվտանգ, քան ներկրվողը:

2.2 Վարչապետին ներկայացնելու նպատակով Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակելու համար Ա. Դանիելյանի թեկնածությանը հավանություն տալու վերաբերյալ

(Ա. Ասոյան, Ռ. Գրիգորյան, Բ. Պիպոյան, Ա. Առաքելյան, Մ. Բեգլարյան, Տ. Խաչատրյան)

Նախքան երկրորդ թեկնածուին ներս հրավիրելը Ա. Ասոյանը հակիրճ ներկայացրեց, թե ինչու է առաջադրել Ա. Դանիելյանի թեկնածությունը: Նա ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի աշխատակից է, համակարգում է սննդամթերքի անվտանգության և շուկայի վերահսկողության ոլորտները, քաջատեղյակ և լավ ծանոթ է ոլորտին: Թեկնածությունը ներկայացնելու պատճառներից մեկը եղել է այն, որ վարչապետին ներկայացվի այլընտրանք, քանի որ Խորհուրդը կարող է բոլոր թեկնածուներին էլ ներկայացնել, սահմանափակում չկա, վարչապետն է որոշելու, թե ում նշանակի, և անկախ քվեարկության արդյունքներից, նույնիսկ երկու թեկնածուին էլ, հնարավոր է, որ որոշում կայացվի չնշանակել: Կա նաև այդ տարբերակը: Նա առաջարկեց թեկնածուներին լսելուց հետո, եթե դեմ չեն, կողմ քվեարկեն, երկու թեկնածուներն էլ ներկայացվեն վարչապետին:

Հաշվի առնելով, որ անծանոթ անձի թեկնածությանը կողմ կամ դեմ քվեարկելու համար պետք է ավելի շատ հարցեր տալ, Բ. Պիպոյանն առաջարկեց քննարկել Ա. Ասոյանի կողմից թեկնածության ներկայացումը հանելու կամ թեկնածուի կողմից ինքնաբացարկ հայտնելու տարբերակները:

Նախարարը հստակեցրեց, որ եթե ներկայացված է թեկնածու, և ներկայացնողը չի հանում թեկնածությունը կամ անձը ինքնաբացարկ չի հայտարարում, Խորհուրդը պարտավոր է լսել, քննարկել և քվեարկել: Նախարարը Ա. Ասոյանին խնդրեց պարզաբանել, որ եթե միայն այլընտրանք ապահովելու համար է ներկայացվել երկրորդ անձի թեկնածություն, արդյոք հարց չի առաջանա, թե ինչու է ընտրվել թեկնածություն առաջադրելու այդ տարբերակը:

Ա. Ասոյանն առաջարկեց քննարկել նաև իր կողմից առաջադրված անձի թեկնածությունը, քանի որ անձը ցանկություն է հայտնել առաջադրվելու, և Խորհրդի յուրաքանչյուր անդամ քվեարկի թեկնածուին լսելուց հետո:

Նախարարն առաջարկեց քննարկում ըստ էության, որովհետև եթե թեկնածուն ինքնաբացարկ չի հայտնում, ապա պետք է լսել և ներքին համոզմունք ունենալուց հետո քվեարկել: Բովանդակային քննարկում կազմակերպել, լսել թեկնածուին, հարցեր ուղղել և ըստ այդմ որոշել՝ քվեարկել կողմ, թե դեմ:

Ա. Ասոյանն առաջարկեց երկրորդ թեկնածուի քննարկումը կատարել նույն ձևաչափով, քանի որ կենսագրական տվյալները արդեն ներկայացված են:

Նախարարը թեկնածու Ա. Դանիելյանին հրավիրելուց հետո ներկայացրեց ձևաչափը, որով քննարկվում է անձի թեկնածությունը՝ նույն կարգով, ինչպես նախորդ թեկնածուի դեպքում, այնուհետև կարճ ժամանակ հատկացնել թեկնածուին՝ իր նկատառումները, այդ պաշտոնում պաշտոնավարելու հանգամանքները ներկայացնելու համար, Խորհրդի անդամները, եթե կունենան հարցեր իրենց տեսակետը վերջնական ձևավորելու համար, կպատասխանի դրանց, կպարզաբանի:

Իր կենսագրական տվյալները ներկայացնելուց հետո Ա. Դանիելյանը նշեց, որ ինքը քաջատեղյակ է ոլորտի իրավիճակին, խնդիրներին, ունի խնդիրների լուծման իր պատկերացումները, կարգավորումները՝ թե օրենսդրական, թե գործառութային: Հիմնական խնդիրներից առանձնացրեց օրենքով կարգավորվող որոշ գործընթացներ, երբ տեսչական մարմնին վերապահված է ծառայություն մատուցելու իրավասություն՝ միաժամանակ իրականացնելով դրա նկատմամբ հետագա վերահսկողություն: Իր կարծիքով կա շահերի բախում, և օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելու միջոցով անհրաժեշտ է տարանջատել ծառայությունների մատուցման (թույլտվության տրամադրման) և վերահսկողություն իրականացնելու գործառույթները՝ դրանք վերապահելով առանձին պետական մարմինների: Սպանդանոցների օրինակով նա նշեց, որ սննդամթերքի անվտանգությունը հայտարարված է որպես գերակա, սակայն շահերի բախման արդյունքում տուժում է հենց նույն՝ գերակա հայտարարված նպատակը, քանի որ տեսչական մարմնի առաջ դրված է խնդիր ապահովելու անհրաժեշտ քանակությամբ սպանդանոցների առկայությունը, և այդ սպանդանոցների՝ թույլտվության պահանջների համապատասխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս խախտումներ չարձանագրելու ռիսկ է առաջանում: Նա հավելեց, որ իր այս օրինակը որևէ փորձի վրա հիմնված չէ, այն դիտարկում է որպես օրենսդրության խնդիր:

Նա ընդգծեց նաև սահմանային վերահսկողության ժամանակ մի շարք խնդիրների լուծման մասին իր պատկերացումները. ռիսկի վրա հիմնված վերահսկողության իրականացման, լաբորատոր փորձաքննության կազմակերպման, ռեֆերենս լաբորատորիաների բացակայության, ինչպես նաև արտակարգ և ռազմական դրության պայմաններում լաբորատորիաների գործունեությունը կանոնակարգելու մասին: Ընդգծեց նաև իրազեկման աշխատանքների կարևորությունը, ինչի արդյունքում սահմանային վերահսկողության ժամանակ տնտեսվարողի համար պետք է բարձրացվի իրազեկման մակարդակը: Տնտեսվարողը պետք է կարգը հստակ իմանա՝ ֆինանսական և այլ ռեսուրսների կորուստներից խուսափելու համար:

Ամփոփելով խոսքը՝ Ա. Դանիելյանը նշեց, որ ինքը այժմ էլ զբաղվում է ոլորտի քաղաքականության մշակմամբ, սակայն տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում կկարողանա ոլորտում շատ ավելի արդյունավետ հանդես գալ:

Բ. Պիպոյանը նախքան հարց հնչեցնելը ներկայացրեց, որ մինչև թեկնածուին ներս հրավիրելը ինքն առաջարկել է մի դիտարկում անել. քանի որ Խորհրդի կազմում ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ այս ընթացակարգով գումարվել է նիստ: Որքանով է կարծում մարդկային տեսանկյունից ճիշտ, որ Խորհրդին ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կողմից իր թեկնածությունն առաջադրվի այն դեպքում, երբ առաջադրվել տեսչական մարմնի նախկին ղեկավարի թեկնածությունը ևս:

Ա. Դանիելյանը պատասխանեց, որ հաստիքի թափուր լինելու պատճառի մասին չի կարող որևէ մեկնաբանություն տալ, բայց ինքը հայտ է ներկայացրել թափուր պաշտոնը զբաղեցնելու նպատակով, և կարծում է որ հարցի քննարկումը կարևոր է հատկապես այս պահին՝ քանի որ ռազմական դրության պայմաններում գործադիր իշխանության անխափան աշխատանքը կարևոր է, և այդ իմաստով տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնի համալրումը անհրաժեշտ է, և այս պահին գործադիր իշխանության անխափան աշխատանքն ապահովելու համար պաշտոնի համալրումը անհրաժեշտություն է:

Բ. Պիպոյանը հարցադրումից առաջ հիշեցրեց, որ թեկնածուի կարծիքով՝ շատ լավ տիրապետում է ոլորտին, մինչդեռ ոլորտում երկար աշխատանքային փորձ ունենալով՝ ինքը չի կարող նույնքան վստահաբար շեշտել, որ տիրապետում է ոլորտին շատ լավ: Սննդամթերքի անվտանգության ոլորտի կարգավորումների

մասին խոսելիս թեկնածուն բավականին երկար ժամանակ տրամադրեց՝ խոսելով ռեֆերենս լաբորատորիաների մասին, որն ըստ էության ավելի շատ ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործառույթ է, ինչ կապ ունի տեսչական մարմնի հետ: Որպես երրորդ հարց՝ ինչ է կարծում թեկնածուն, տեսչական մարմնի գործունեության սկզբունքները տեսչական սկզբունքների հիման վրա պետք է լինեն, թե սննդամթերքի անվտանգության սկզբունքների հիման վրա, և այս սկզբունքների մեջ ինչ էական տարբերություն է տեսնում:

Ա. Դանիելյանը նշեց, որ ռեֆերենս լաբորատորիան մեծ ազդեցություն ունի սննդամթերքի անվտանգության վրա, քանի որ ներմուծման ընթացքում միևնույն սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների արդյունքները հաճախ իրարամերժ են, և փորձաքննություն իրականացնելով 3 լաբորատորիաներում՝ որոշումները իրականացվում են հիմնվելով դրական և բացասական արդյունքների հարաբերակցությունից, որը ռիսկի տակ է դնում սննդամթերքի անվտանգությունը:

Սկզբունքներին անդրադառնալով՝ Ա. Դանիելյանը նշեց, որ տեսչական մարմնի գործունեության և սննդամթերքի անվտանգության սկզբունքների միջև որևէ տարբերություն լինել չեն կարող, դրանք իրար հակասել չեն կարող, և ՍԱՏՄ-ն ի վերջո ձևավորվելու է «Տեսչական մարմինների մասին» օրենքով սահմանված սկզբունքների հիման վրա, և երկու դեպքում էլ գերակա խնդիրը մարդկանց առողջությունն է:

Բ. Պիպոյանը հակադարձեց՝ նշելով, որ դեռևս տեսչական բարեփոխումների ժամանակ ինքը մշտապես ընդգծել է այդ տարբերությունը, որը շատ էական է: Սննդամթերքի անվտանգության ոլորտի վերահսկողության հիմնական սկզբունքներն են սպառողների շահերի պաշտպանությունը և թափանցիկությունը: <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքի սկզբունքները հիմնվում են բիզնես մոդելի վրա: Այս տարբերությունն է ինքը տեսնում և կցանկանար, որ թեկնածուն նույնպես տեսներ դա:

Հակադարձելով Բ. Պիպոյանի կարծիքին՝ Ա. Դանիելյանը պարզաբանեց, որ իր կարծիքով <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքը հիմնված չէ բիզնես շահերը կամ գործունեությունը կարգավորելուն, և այժմ իրականացվող օրենսդրական փոփոխությունները միտված են հենց անվտանգության ապահովմանը, :

Բ. Պիպոյանը հիշեցրեց նաև, որ այս սկզբունքները ձևավորվել են ըստ առաջնահերթությունների, թափանցիկության և սպառողների իրավունքների պաշտպանության սկզբունքները առաջնային են, որոնք ձևակերպված են <<Սննդամթերքի անվտանգության վերահսկողության մասին>> ՀՀ օրենքում: <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքում առաջին սկզբունքը սպառողների իրավունքների պաշտպանությունը չէ, ավելին, սահմանված յոթ սկզբունքները տնտեսվարողի մասին են, մինչդեռ <<Սննդամթերքի անվտանգության վերահսկողության մասին>> ՀՀ օրենքի հիմնական սկզբունքները տնտեսվարողին ասում են, որ մեր իմաստը քեզ աջակցելը չէ, ըստ այդմ էլ՝ վերահսկող և աջակցող մարմիններ:

Նախարարը առաջարկեց անցկացնել հարկային անալոգիա: Տնտեսվարող սուբյեկտները, որոնք ինքնահայտարարագրման հիման վրա պարտավոր են սահմանված կարգով վճարել հարկերը, և վերահսկողական գործառույթի հիմնական կետը այն է, որ ռիսկերի վրա կառուցված համակարգի, մյուս բոլոր համակարգերի միջոցով վեր հանի շեղումները և պատասխանատվության միջոցներ կիրառելով կանխի ապագայում նման վարքագիծ դրսևորելը: Բայց մյուս կողմից աջակցության կարևոր գործառույթ ունի, որովհետև իրազեկումը, հարցերի վերաբերյալ պարզաբանումները, ընթացակարգերի պարզեցումը կօգնեն գործընթացին: Այսինքն, որքան աջակցող գործառույթը մեծ է լինում, այնքան ինքնակամ ինքնահայտարարագրման եղանակով վճարման կարգապահությունը բարձրանում է: Այստեղ չկա հակասություն թուրը կտրելու և աջակցելու միջև: Գուցե առանձնահատկություն կա, և եթե խոսում են թեկնածուի կարծիքը լսելու համար, կարող են ճշտել, թե Ա. Դանիելյանը որն է համարում առաջնահերթ:

Ա. Ասոյանի կարծիքով, այդ երկու սկզբունքները ոչ թե իրար հակասում են, այլ իրար փոխլրացնում են, փոխկապակցված են և որևէ կերպ հնարավոր չէ դրանք իրարից տարանջատել: Դա ամրագրված է նաև օրենքով: Ժամանակի սղության պատճառով առաջարկեց թույլ տալ, որ թեկնածուն իր մտքերն ավարտի, իսկ այս հարցերին հետագայում հնարավորություն կունենան անդրադառնալ, քանի որ Ա. Դանիելյանն աշխատանքի բերումով համակարգում է հենց այդ ոլորտների աշխատանքները:

Նախարարը Բ. Պիպոյանի հարցը մեկնաբանեց՝ նշելով, որ երկու սկզբունք կա՝ վերահսկելու և աջակցելու, թեկնածուն արդյոք սրանք միևնույն հարթության մեջ է տեսնում, թե պետք է վերահսկել, անգամ եթե կարևոր չէ աջակցելը:

Ա. Դանիելյանը պատասխանեց, որ տեսչական բարեփոխումների արդյունքում, երբ տեսչական մարմիններն առանձնացան, օրենքում սկզբունքը դրվեց, որ տեսչական մարմինները որևէ նախարարության ենթակա չեն, միայն իրականացնում են տեսչական գործառույթներ: Իսկ թե կաջակցի բիզնեսին կամ ինչպես կաջակցի, կորոշվի քաղաքականության մշակման ընթացքում՝ համապատասխան ստուգաթերթերի հաստատման միջոցով, քանի որ ըստ ստուգաթերթերի է կատարվում վերահսկողությունը, և Տեսչական մարմինը վերահսկողությունն իրականացնում է օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ստուգաթերթերով:

Հարցը ներկայացնելով ֆինանսական տեսանկյունից՝ Բ. Պիպոյանը ներկայացրեց, որ հարկային մարմինները ստուգման ժամանակ հակված են որքան հնարավոր է շատ թերություններ հայտնաբերել, որովհետև յուրաքանչյուր չգրանցված թերություն կամ խախտում նվազեցնում է պետական բյուջեի մուտքը: Ինչ է կարծում, սննդի տեսուչը, ով մտնում է ստուգման, հնարավորինս շատ խախտում պիտի տեսնի և գրանցի, պետք է ավելի շատ ցուցանիշներ բերի, որոնց միջոցով գումար կմուտքագրվի բյուջե, թե ավելի մեղմ պիտի վերաբերվի, այսինքն, ստուգաթերթերը պետք է սեղմվեն, թե ընդարձակվեն:

Ա. Դանիելյանը պատասխանեց, որ <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքով սահմանված է, որ տեսչական մարմինն ի սկզբանե պետք է ոչ թե ուղղություն վերցնի դեպի տուգանումը՝ բյուջե լցնելու նպատակով, այլ օրենքի նպատակն է ոլորտի անվտանգության ապահովումը: Այդ նպատակին հասնելու համար ունի իրազեկման և վերահսկողական գործիքներ, որոնց բալանսավորումը նույնպես տեսչական մարմնին է վերապահված, և նշեց, որ իր կարծիքով, պետք է ավելացվեն՝ ավելի տեսանելի արդյունք ստանալու համար:

Մ. Բեգլարյանի հարցը վերաբերում էր <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքով սահմանված ռիսկերի կառավարմանը, որը պետք է հիմնվի ռիսկերի կառավարման գիտական կենտրոնի հետազոտությունների վրա, որը մինչ այժմ կարգավորված չէ, ինչ տեսլական ունի թեկնածուն այս բացը լրացնելու համար, ինչպես նաև ՀՀ-ում ռիսկերի գնահատման գործընթացի կայացման հարցում:

Ա. Դանիելյանը պատասխանեց, որ կարևորում է այն, որ ռիսկերը չպետք է հաշվարկվի միայն վիճակագրական տվյալների վերլուծության արդյուքում, այլ պետք է հիմնված լինեն գիտական հետազոտությունների արդյունքների վրա, ոչ միայն նրա

համար, որ այն ամրագրված է օրենքով, այլ նաև նրա համար, որ օրենքով ամրագրելու հիմքում դրված է միջազգային լավագույն փորձը, և հետևաբար կարևորում է գիտական կառույցների ներգրավվածությունը ռիսկի կառավարման գործընթացում: Նա նշեց, որ շուտով կկատարվեն անհրաժեշտ փոփոխություններ, որոնք արդեն ավարտական փուլում են, կմշակվի համապատասխան կարգը, որով հնարավոր կլինի կանոնակարգել ռիսկի կառավարման ոլորտում գիտական կազմակերպություններ ներգրվելու ընթացակարգը: Մ. Բեգլարյանին նաև հետաքրքրեց թեկնածուի անձնական կարծիքը ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը փոփոխության ենթարկելու հարցում: Ա. Դանիելյանը նշեց, որ ռիսկերի գնահատման վրա տարբեր գործոններ իրենց ազդեցությունն են ունենում, և տեսչական մարմնի կազմում կա համապատասխան ստորաբաժանում, որն իրականացնում է ռիսկայնության չափորոշիչները որոշելու գործառույթ: Նա արտահայտեց նաև ռիսկայնության գնահատման բազային համակարգի վերաբերյալ իր մոտեցումները:

Ռ. Գրիգորյանին հետաքրքրեց, քանի որ թեկնածուն աշխատում է քաղաքականություն մշակող մարմնում, որքանով է արդյունավետ համարում տեսչական մարմինների կառուցվածքը և գործառույթները, քանի որ պետությունը շահագրգիռ է, որ խախտումներ և չարաշահումներ տեղի չունենան: Ինչպես նշվեց, ունեն լավագույն փորձի վրա հիմնված ստուգումների պլան, հնարավոր է, որ այս մեթոդը արդյունավետ չէ, լինեն այլ մեթոդներ, որոնք կընդունվեն օրենսդրությամբ: Օրինակ, սննդի ոլորտում եթե քաղաքացին հայտնաբերի ժամկետանց ապրանք, դիմի որևէ կազմակերպության և հօգուտ իրեն գումար ստանա, և առհասարակ, ինչ է կարծում, ստուգման պլանը և ռիսկայնության համակարգը իրեն չի սպառել և հնարավորություն չի տալիս որևէ պահի գտնվել անվերահսկելի իրավիճակում: Սննդամթերքի ոլորտում տնտեսվարողները շատ են, իսկ օրինակ, ընդերք օգտագործողների ոլորտում ունենք մի իրավիճակ, որ հանքարդյունաբերողները կարող են որոշ ժամանակահատված իրենց գլխին պետության շունչը չտեսնել:

Ա. Դանիելյանը պատասխանեց, որ ըստ ռիսկայնության ստուգումների կազմակերպման նպատակներից մեկը սահմանափակ ռեսուրսներով հնարավորինս մեծ արդյունքի հասնելն է: Եթե պետությունը կարողանա ամեն տեղ ամեն ինչ վերահսկել՝ առանց տնտեսավարողների գործունեությանը խոչընդոտելու, դա իդեալական կլինի: Ինչ վերաբերում է այն հարցին, երբ օրինակ հանքարդյունաբերության ոլորտում ստուգումներ չիրականացնելու հետևանքով կարող է հասցվել անդառնալի վնաս, ապա հանրային մեծ վտանգավորություն

ունեցող օբյեկտների դեպքում ստուգումների մասին օրենքը թույլ է տալիս նաև տարին երկու անգամ, կամ ըստ անհրաժեշտության՝ ՀՀ վարչապետի հանձնարարությամբ իրականացնել ոչ պլանային ստուգումներ, և իր կարծիքով օրենքը իրեն չի սպառել: Ինչ վերաբերում է ՍԱՏՄ-ին՝ նշեց, որ ՍԱՏՄ-ն, բացի ստուգումներից, ունի նաև դիտարկման գործիք, որը ի տարբերություն պլանային ստուգումների, իրականացվում է նաև ոլորտային՝ հարավորություն ստեղծելով ռիսկի առաջացման դեպքում արագ արձագանքել:

Նախարարը հստակեցրեց, որ Ռ. Գրիգորյանի հարցադրումը վերահսկողական գործառույթի մի մասը սպառողին փոխանցելու նպատակահարմարության մասին է, քննարկվել է արդյոք այս հարցը:

Ա. Դանիելյանը պատասխանեց, որ ՍԱՏՄ կողմից տրամադրվող ՁԼ 5-ը հենց դրա օրինակն է, որտեղ կա հանրային վերահսկողության գործիքը, որով հնարավոր է պարզել հետագծելիությունը: Սակայն հանրային վերահսկողությունը ենթադրում է խախտումների արձանագրելու հնարավորություն, և եթե անձին խախտման արդյուքում վնաս չի հասցվել, ապա այդ անձին որևէ հատուցում չի նախատեսված, իսկ այն դեպքում երբ խախտման արդյուքում սպառողին վնաս է հասցվում, Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքով նաև այդ հարցն է կարգավորվում:

Ա. Առաքելյանի հարցին, թե ինչ կփոխեր թեկնածուն առաջինը՝ պաշտոնի նշանակվելու դեպքում, Ա. Դանիելյանը պատասխանեց, որ առաջին հերթին կկարգավորեր սահմանային վերահսկողության հարցը, քանի որ փոքր ռեսուրսներ ներդնելով կստանար մեծ արդյունք՝ հաշվի առնելով այն, որ ՀՀ-ում սպառվող սննդամթերքի զգալի մասը ներմուծվում է:

Նախարարը առաջարկեց պարզաբանել, թե ինչը ներմուծման պահին կարգավորված չէ, որ պետք է կարգավորել:

Ա. Դանիելյանը մատնանշեց այդ պահին իրազեկման մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը, պահանջվող փաստաթղթերի ցանկի մասին ծանուցել տնտեսվարողին և այլ ընթացակարգային խնդիրներ:

Նախարարը փաստեց, որ այդ ամենը միայն արագացնում են գործընթացը, ոչ թե ազդում են ներմուծվող սննդամթերքի անվտանգության ապահովման վրա: Դա կապ ունի ընթացակարգերի պարզեցման, ոչ թե սննդի անվտանգության հետ:

Ա. Դանիելյանը նշեց, որ սահմանային վերահսկողության խնդիրների կարգավորումը ուղղակի ազդեցություն ունի սննդամթերքի անվտանգության վրա, քանի որ վերահսկողական գործիքների ոչ պատշաճ կիրառման հետևանքով կարող է վերահսկողությունից դուրս մնալ ռիսկային սննդամթերքը:

Բ. Պիպոյանը հիշեցրեց ներմուծման ժամանակ կիրառվող ընթացակարգերը:

Ա. Դանիելյանը պարզաբանեց, որ ինքը նկատի ունի այն դեպքերը, որ սահմանված կարգով ոչ ռիսկային համարվող ապրանքների լաբորատոր փորձաքննություններին, որոնք այլ հավասար պայմաններում չպետք է ենթարկվեին փորձաքննության, սակայն ոչ պատշաճ իրազեկվածության պատճառով ենթարկվում են փորձաքննության՝ կորցնելով ժամանակ և ֆինանսական ռեսուրսներ:

Նախարարի առաջին հարցադրումը վերաբերում էր սպանդանոցներին: Քանի որ թեկնածուն աշխատում է քաղաքականություն մշակող մարմնում, ինչ է կարծում, որն է ստեղծված իրավիճակի պատճառը՝ չունենք ենթակառուցվածքներ, որովհետև չունենք պահանջ, և մյուս կողմից՝ չենք կարողանում ներկայացնել պահանջ, որովհետև չունենք ենթակառուցվածքներ: Այս պատմությունը մեզ կանգնեցրել է մի իրավիճակի առաջ, որ սպանդանոցային մորթի անցնելու արդյունքում պատշաճ վերահսկողության շնորհիվ երաշխավորել շուկայահանված մսամթերքի անվտանգ լինելը: Ինչ չենք արել ժամանակին և ինչու ենք հասել այս օրվան:

Ա. Դանիելյանը պատասխանեց, որ գործընթացը սկսվել է հունվարի 15-ին:

Նախարարը շտկեց, որ գործընթացը սկսվել է 2017 թվականին:

Թեկնածուն պարզաբանեց, որ որպես մեզ համար խոցելի հարց, անդրադարձել են հունվարի 15-ին, երբ տնտեսվարողները իմացան, որ սպանդանոցային մորթը պարտադիր պահանջ է: Նրա կարծիքով, պատշաճ իրազեկման միջոցով ավելի լավ կարելի էր ներկայացնել բիզնես պրոյեկտը տնտեսվարողներին, քանի որ իր համոզմամբ սպանդանոցային գործունեությունը բավականին շահութաբեր գործունեության տեսակ է, և համապատասխան իրազեկման դեպքում շատ ավելի լավ արդյունքներ կունենայինք սպանդանոցների հարցում: Խոսեց նաև այն տնտեսվարողների մասին, ովքեր շահութաբեր չեն համարել արդեն կառուցված սպանդանոցները՝ պահանջարկի բացակայության պատճառով, սակայն նման դեպքերը բացառիկ են: Նա կարևորեց հայտարարված

սկզբունքից հետ չկանգնելու անհրաժեշտության մասին, որը ի վերջո կտա արդյունք: Այստեղ էլ օրենքով պետք է տարանջատել ծառայություն մատուցող և վերահսկող գործառույթներով օժտված մարմինները:

Նախարարի երկրորդ հարցն այն էր, թե որն է թեկնածուի մոտիվացիան այսօր այս քննարկմանը մասնակցելու, և եթե սկզբից ասաց, որ լրջորեն մտածել է, թե պաշտոնը թափուր է, պաշտոնում իր թեկնածությունը քննարկելու համար, այս քննարկման արդյունքում առավել անկեղծորեն ասի՝ որն է մոտիվացիան:

Ա. Դանիելյանը պատասխանեց, որ այդ հարցի վերաբերյալ ի սկզբանե հայտնած դիրքորոշումը անկեղծ էր, և իր համար մոտիվացիան պաշտոնի բարձրացումն է, և միևնույն ոլորտում ունենալ ավելի լայն լիազորություններ և հնարավորություն իր գիտելիքները և փորձը օգտագործելու համար, իսկ քննարկմանը իր մասնակցությունը ձևական բնույթ չի կրում:

Մ. Սանդոյանը, հիշեցնելով, որ պետական համակարգից թեկնածուն դուրս է եկել 2 տարով, գնացել է բիզնես դաշտ, այնուհետև նորից վերադարձել, խնդրեց մեկնաբանել, թե ինչն էր պատճառը:

Ա. Դանիելյանը պատասխանեց, որ հրաժարվել է, որովհետև այդ ժամանակ պետական համակարգում չի տեսել աճ, նկատի չունենալով իր պաշտոնի բարձրացման աճը, թեև եղել են այլ առաջարկներ, այլ չի տեսել իր աշխատանքի արդյունքում դրական արդյունք, և ինքը իրեն այդ ժամանակ ավելի երջանիկ է զգացել պետական համակարգից դուրս, իսկ մասնավոր հատվածում իրականացնել է տարբեր նախագծեր: Այնուհետև, 2018 թվականի հայտնի փոփոխությունից հետո շատ լավ աշխատանքային առաջարկ ստանալով՝ վերադարձել է պետական կառավարման ոլորտ, որտեղ, իր կարծիքով, իր գիտելիքներով առավել օգտակար կլինի պետությանը:

Ամփոփելով քննարկումը՝ նախարարը հստակեցրեց քվեարկությանն ընթացակարգը:

Բ. Պիպոյանը հայտնեց, որ ինքը կողմ է քվեարկելու թեկնածու Գ. Ավետիսյանին, իսկ Ա. Դանիելյանի թեկնածության քվեարկությանը մասնակցել չի ցանկանում, քանի որ քննարկման արդյունքում իր մեջ չի ձևավորվել կարծիք՝ կողմ կամ դեմ քվեարկելու համար: Սակայն ընթացակարգերից ելնելով, որոշեց քվեարկել դեմ:

Երկրորդ թեկնածուի հետ կապված՝ Ռ. Գրիգորյանը չհամաձայնեց Բ. Պիպոյանի տեսակետին: Եթե խորհրդի անդամը ներկայացրել է թեկնածու, մասնակցում է իրավական գործընթացի, հարկ չկա դնել նեղ դրության մեջ՝ հարցնելով, թե որն է իր մոտիվացիան: Փոխարենը պետք է լսել և անկեղծ քվեարկությամբ արտահայտել կարծիք:

Ա. Ասոյանը ներկայացրեց, որ կողմ է քվեարկելու երկու թեկնածուների օգտին, իսկ Ա. Դանիելյանի թեկնածությունը ներկայացնելու նպատակը անձի ցանկությամբ հնարավորություն տալն է, որպեսզի իր ուժերը և հնարավորությունները փորձի թափուր պաշտոնում: Գ. Ավետիսյանի թեկնածությանը կողմ է քվեարկելու՝ հաշվի առնելով իրենց համատեղ անցած աշխատանքային ուղին:

Խորհրդի՝ քվեարկությանը մասնակցած անդամների 10(տասը) կողմ ձայներով միաձայն որոշվեց՝

1) Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակելու նպատակով Գ. Ավետիսյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին:

Խորհրդի՝ քվեարկությանը մասնակցած անդամների 2(երկու) կողմ (Ա. Ասոյան, Ա. Պողոսյան) և 8(ութ) դեմ (Տ. Խաչատրյան, Ռ. Գրիգորյան, Տ. Գաբրիելյան, Լ. Նանուշյան, Բ. Պիպոյան, Մ. Բեգլարյան, Մ. Սանդոյան, Ա. Առաքելյան) ձայներով որոշվեց՝

1) Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակելու նպատակով Ա. Դանիելյանի թեկնածությունը չներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին:

Խորհրդի նախագահը նշեց Ա. Դանիելյանի թեկնածությանը դեմ քվեարկելու պատճառը: Չնայած լավ կրթությանը, աշխատանքային փորձին, վերջին երկու հարցերին պատասխանելով՝ իր մեջ փոխել է վերաբերմունքը: Առաջնահերթությունների մասին հարցին ընդհանրական պատասխան տալը ճիշտ չէր մանավանդ այն դեպքում, երբ անձը հավակնում է դառնալ կառույցի ղեկավար:

կարևորագույն հարցերից մեկն է, մանավանդ, որ հուշումից հետո չկարողացավ ձևակերպում տալ, որ ենթակառուցվածքի բացակայությունը թույլ չէր տալիս կատարել վերահսկողություն, և վերահսկողության բացակայությունը թույլ չէր տալիս ձևավորել ենթակառուցվածք: Այս հարցում էլ թեկնածուն որևէ սպառիչ պարզաբանում չինչեցրեց: Այնուամենայնիվ, նշեց, որ ողջունում է հեռանկարային կադրերի առաջընթացին նպաստելու Ա. Ասոյանի նախաձեռնությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

Ա. ԱՍՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

Տ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

Լ. ՆԱՆՈՒՇՅԱՆ

ՀՀ ԳԱԱ-Ի ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ, ԱՎԱԳ ԳԻՏԱՇԽԱՏՈՂ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

«ԻՐԱՋԵԿ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՍՊԱՌՈՂ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

Բ. ՊԻՊՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԷԿՈԼՈԳԱՆՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԻ ՍՆՆԴԻ ՇՂԹԱՅԻ ՌԻՍԿԵՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

Մ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

«ՓՄՁ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

Մ. ՍԱՆԴՈՅԱՆ

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ